

**«ԿՈՎԿԱՍ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԴԵՐԸ
ԱՐԵՎԵԼԱՋԱՅ ԳԻՏԱԿԱՆ ՈՃԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

Ե. Մ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Գիտական ոճը, որը սկսած XVIII դ. կեսերից կիրառվում էր արևելահայ իրականության մեջ, մինչև «Կովկաս»¹ պարբերականի հանդես գալը նկատելի զարգացում էր ապրել՝ կապված հայ-ռուսական հարաբերությունների ծավալման հետ։ Արդեն XVIII դ. հայտնի են ռուսերենին առնչվող երկու բառարան, թարգմանություններ, բազմաթիվ վավերագրեր, իսկ մինչև XIX դ. կեսը հրատարակվում են ռուսաց լեզվի դասագրքեր, ընթերցարաններ, դրուցարաններ և երեք բառարան, կատարվում են զգալի թվով թարգմանություններ, ստեղծվում հազարավոր վավերագրեր, որոնք մասամբ պայմանավորված էին Աղաբաբյան, Լազարյան, Ներսիսյան բարձրագույն ուսումնարանների պահանջներով, որտեղ ռուսերենի ուսուցումը պարտադիր էր։ Ռուսերենին առնչվող գրավոր մշակույթի այս արտահայտությունները մեծապես խթանում են արևելահայ իրականության մեջ գրաբար գիտական ոճի զարգացմանը, այն օժտելով անհարկի ռուսաբանությամբ (այս կարգի գիտական ոճը հետագայում Ս. Շահազիզը կոչում է կոնսիստորական գրարար)²։ Մինչև «Կովկաս» պարբերականի հանդես գալը գիտական բառապաշարի ստեղծումը սահմանափակ ոլորտ էր ընդգրկում, ակնհայտորեն տարերային բնույթ ունեւր, և բնականաբար ստեղծված տերմինաբանությունը մեծ քանակ չէր կազմում։ «Կովկասը» զգալիորեն ընդարձակում է գիտական ոճի ընդգրկած նախկին սահմանները, հարստացնում ու հետևողականորեն մշակում է տերմինաբանությունը, ուղղություն է տալիս գիտական ոճի զարգացմանը՝ ըստ էության հաղթահարելով հայերենին խորթ ռուսական կաղապարները։

«Կովկասի» գիտական ոճը առաջինը փորձել է գնահատել Ստ. Նազարյանը։ «Կովկասում» մենք գտնում ենք ոճի տարօրինակ խալտաբեղտություն, որը հետևանք է ժողովրդին՝ անհասկանալի գրաբարյան արտահայտությունների օգտագործման և պարսկերեն ու թուրքերեն բառերի հաճախակի թող-տվության. ...ծանր և կազմությամբ նկատելիորեն հնաոճ պարբերություններ, որոնք շունեն սահունություն և արտահայտման արդի ձևերին հատուկ հաճելի պարզություն և վերջապես, հայերենի ոգուն ճարտարորեն չհամապատասխանեցված ակնհայտ ռուսաբանություններ»³։ Այսպիսի խստապահանջ մոտեցումը բացատրվում է նրանով, որ Նազարյանը դեռևս հստակ պատկերացում չուներ ռուսերենից հայերեն թարգմանության դժվարությունների և ժամանակի լեզվական վիճակի իրական գործընթացների մասին։ Ի դեպ, Նա-

¹ «Կովկաս» շաբաթաթերթը հրատարակվել է Տփլիսում, 1846—1847 թթ.։ Խմբագիրներն էին Հ. Կարենյանցը և Գ. Պատկանյանը։ Կրագիրը իր առաջ խնդիր էր դրել պարզաբանել ռուսական պետության հետ Կովկասի անցյալ և ներկա հարաբերությունները ու դրանով իսկ ուղղություն տալ այնտեղ ապրող հայության հասարակական-քաղաքական գիտակցությանը, մյուս կողմից՝ իրատեսորեն արտացոլել ժամանակի հայության կյանքն ու ձգտումները, որոնք հաճախ աղավաղված, իսկ առհասարակ անբավարար էր ներկայացվում (տե՛ս «Կովկաս», 1846, № 19, էջ 66)։ Այս լրագրի՝ հասարակական-քաղաքական նշանակությունը դեռևս խորապես չի քննված։ Ընդհանուր պատկերացում կարելի է կազմել հետևյալ աշխատությամբ՝ Հ. Կ. Զարո, Հայոց մամուլը Ռուսաստանում և Գովկասի մեջ, Թիֆլիս, 1878, էջ 18—22։

² Ս. Շահազիզյան, Հրապարակախոս ձայն, Մոսկվա, 1881, էջ 49։

³ С. т. Назарян, Обозрение гайканской письменности в новейшие времена, Казань, 1846, с. 157.

զարյանի «Յաղագս փորձական հոգեբանութեան ճառ»⁴ գրաբար երկը ևս ղերծ չէր «Կովկասի» համար իր իսկ մատնանշած թերութիւններէն:

«Կովկասի» գիտական ոճին անդրադարձել է նաև Փ. Ծամճյանը. «Լեզուն գրաբար էր, որուն մեջ բավական հաջող ձեռք ու վարժ գրիչ մը կերեար. նոր հարմարացած բառերն մեծ մասը լեզվագետ մարդու մտադրութեամբ և ախորժակով շինված կրնանք համարիլ, բայց կգործածեն նաև եվրոպացի-վոց և ռուսաց այնպիսի զինվորական և քաղաքական բառեր, որոնց հայերէնը ինքը չգիտեր կամ չէր կրցեր հարմարցնել»⁵: Իսկ հայ լրագրութեան պատմաբան Գ. Գալեմբէյանը արդեն վերադարձնում է՝ վերագրելով «Կովկասին» օտարաբան միտումը:

«Կովկասի» նյութերը ընդարձակ ու բազմաբնույթ էին. հաղորդում էին հայութեան կյանքի, ռուսաց տերութեան և համաշխարհային կարևոր իրադարձութիւններն ու լուրերը: Դրանք քաղվում էին ռուսական տարբեր թերթերից, այդ թվում նաև Տփլիսում հրատարակվող «Кавказ»-ից⁷, որի նյութերը ունեին զուտ տեղային բնույթ: Հետևաբար, սխալվում են հայ լրագրութեան որոշ պատմաբաններ՝ կարծելով, որ «Կովկասը» «Кавказ»-ի սոսկական թարգմանութիւնն էր: «Կովկասի» նյութերը գլխավորապես հասարակական-քաղաքական, մասամբ առևտրական ու գեղարվեստական, իսկ ավելի քիչ բնագիտական ու բժշկական բնույթի են: Նրանում գործադրվող գիտական ոճը ներկայանում է գրաբարով և աշխարհաբարով, ըստ որում, աշխարհաբար գիտական ոճով շարադրված նյութերը փոքր տոկոս են կազմում: Աշխարհաբար օգտագործվում է որոշ հանգամանքների թելադրանքով. մասնավորապես միջ թերթում «Կովկասի» երկլեզվութիւնը անկարգութիւն հասնաւորող պարսավագրին խմբագիրը հետևելով կերպ է պատասխանում. «Ընդէր զխառն գործածութիւն գրաբար և աշխարհիկ լեզուաց չհամարեցար խորհրդով արարեալ, որպես հնար ի դիւրել ընթերցողաց զիմաստ բանիցն, մանաւանդ վերաբերելոց առ իրս առևտրականս և առ այլ մասնաւոր գիտելիս: Զգիտես զի ընթերցողք մերոյս լրագրոյս, չեն բոլորովին աշակերտք գրոց. զի թող զմի մասն նոցա, որք կրթեալ են ի ներսիսեան դպրոցի և կամ ի բարեհալմբով աղգալոյս ճեմարանին լազարեանց... մնացեալն են յայնցանէ, որք ճանաչելով զարգն գրոց, առանց դաստիարակի, միմիայն ընթերցմամբ մատենից լուսաւորեն զմիտս: Ուստի լրագիրն «Կովկաս» վասն ուսելոց ի կիրառնու զպարզ լեզուն գրաբար, իսկ վասն այլոց ընթերցասիրաց զաշխարհիկն բարբառ, որ ըստ դժբաղտութեան ազգիս իւրաքանչիւր գաւառաց բաժանի ի զանազան խօսս...» (ն. տ.):

«Կովկասում» կիրառվող գրաբարը, այսպես կոչված, պարզ գրաբարն էր, որը, լայն գործածութիւն ստանալով XVII դ., XVIII դ. արդեն որոշակի ձևավորման հասած լեզվական որակ էր և հարստանում ու մշակվում էր XIX դ. առաջին կեսում: Պարզ գրաբարի, որպես ինքնուրույն լեզվի որակի, գիտակցման մասին բազմաթիվ վկայութիւններ կան արեւմտահայ, մասամբ նաև՝ արեւելահայ մշակույթի մեջ: Ն. Աշտարակեցին իր հրատարակելիք «Տարեգրութիւն Հայոց» հանդեսի լեզվի մասին գրում է. «Շարադրական ոճ «Տարեգրութեան» պարտի լինել գրաբար, այլ պարզ և դիւրիմաց՝ առանց կուտակութեան աւելորդ բառից և միանգամայն յարմար՝ փութով իմն լուսաւորել զիմացա-

4 Ս. տ. ն ա զ ար յ ա ն, Յաղագս փորձական հոգեբանութեան ճառ, Մոսկվա, 1851:

5 Փ. Ծ ամ ճ յ ա ն, Աղգալոյս լրագիրք և օրագիրք: Պատմութիւն (Եվրոպա), 1850, № 35, էջ 139):

6 Գ. Գ ա լ Ե մ Բ յ ար յ ա ն, Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանն մինչև մեր օրերը (Հանդես ամսօրյա, 1888, № 11, էջ 187): «Կովկասի» լեզվին անդրադարձած այլ գործերում գիտական ոճի հարցեր չեն շոշափված:

7 «Кавказ», газета политическая и литературная, Тифлис, 1846—1916.

8 Հ ս տ «Կովկասի», 1847, № 33, էջ 139 («Կովկասից» արված մեջբերումների թիվը, համարը և էջը կտրվեն բնագրին կից):

կանութիւն ժողովրդեան, զտել զընտանի բարբառ նորա, և ունակացուցանել նմա զկանոն միջասահման խօսելութեան գրաւոր լեզուի մերոյ⁹։ Լ. Կայդանովի գրքի թարգմանիչը առաջաբանում ծանուցում է. «...թարգմանեցի զայս համառօտ Գծագրութիւն Ռուսաց Պատմութեան ի հայ լեզու յոճ դիրիմաց և համբակալարմարն¹⁰։ «Կովկասը» ևս արտահայտել է պարզ գրաբարի լեզվական իր կողմնորոշումը. «Լրագիրն Կովկաս ուսելոց ի կիր առնու զպարզ լեզուն գրաբառ» (1847, 35, 138)։

«Կովկասի» գրաբար գիտական ոճի մեջ ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել երկու տարբերակ՝ ընդհանուր կամ լեզոք և բարձր կամ հոգևոր-ատենական։ Քաղաքական, ռազմական, լրատվական, ինչպես նաև առևտրական ու բնագիտական նյութերը, բնականաբար, շարադրված են ընդհանուր կամ լեզոք տարբերակով։ Այն աչքի է ընկնում պարզությամբ և գիտական լեզվին հատուկ հստակ և կուռ կառուցվածքով. օտարաբանությունը և տարբերանությունը նրանում ակնառու չեն, իսկ կանոնավորությամբ կարող է համեմատվել ռուսերենի համապատասխան գիտական ոճի հետ, որի վրա և կազապարվել էր։

Բարձր կամ հոգևոր-ատենական տարբերակով են շարադրված հոգևոր ու պալատական կյանքի, տոնակատարությունների, հանդեսների, աստվածաբանությանների մասին նյութերը։ Այդ տարբերակը հագեցած էր հնաբանություններով, վերամբարձ ու ճոխ բառապաշարով, կրոնական, աստվածաբանական խորհրդանշային հղումներով, հատուկ անուններով և առհասարակ բնորոշվում է ճարտասանական շարադրանքի՝ խոսքի վեհություն ստեղծող միջոցների առատ օգտագործմամբ։ Այն ձևավորվել էր ռուսերենի համապատասխան ոճի ազդեցությամբ՝ համաբնույթ նյութերի թարգմանության ընթացքում։ Հրապարակախոսական նյութերի ոճը տատանվում է լեզոք և բարձր տարբերակի միջև՝ մեծ չափով հակված լինելով դեպի լեզոքը։

Աշխարհաբար գիտական ոճը սահմանափակ կիրառություն ունի «Կովկասում»։ Դա պայմանավորված էր տիրող մտայնությամբ, ըստ որի գրաբարը՝ բարձր նյութերի և առհասարակ գիտության լեզու էր, իսկ աշխարհաբարը՝ առօրյա նյութերի ու հանրամատչելի գիտելիքների։ Աշխարհաբարով են տրված հիմնականում առևտրական, մասամբ, նաև բժշկական և այլ բրնույթի հոդվածներ, լուրեր, ինչպես նաև՝ մի լեզվաբանական հոդված՝ «Ազգասիրական խոսակցություն երկու հայազգի անձանց» (1847, 8, 24—22. 9, 33—36. 10, 37—39)։ Աշխարհաբար գիտական հոդվածների լեզուն որոշակիորեն կարելի է բաժանել երեք տարբերակի՝ ժողովրդաբարբառային, ժողովրդային-գրաբարացված, դրաբարամետ։ Առաջին տարբերակով հոդվածները սակավաթիվ են, իսկ 1847 թ. այն չի գործածվում։ Այս տարբերակը կրում էր գլխավորապես Տփլիսի և արևմտահայ բարբառների անմիջական ազդեցությունը։ Գրաբարամետ տարբերակի միակ օրինակ կարելի է համարել վերոհիշյալ «Ազգասիրական խոսակցությունը»։ Այս երկու տարբերակներից որևէ մեկը աշխարհաբար գիտական ոճի տեսակետից օրինակելի չէր՝ առաջինը լեզվամտածողական ընդհանրություն չունենալու և արտահայտչական նվազ հնարավորությունների, երկրորդը՝ ժողովրդական լեզվամտածողությունից առավել չափով կտրված լինելու պատճառով (որով վերջինս ընկալվում էր իբրև գրաբարի մի տարբերակ)։ Աշխարհաբար գիտական նյութերի մեծագույն մասը շարադրված է ժողովրդային-գրաբարացված տարբերակով, որը աշխարհաբար գիտական ոճի տեսակետից լավագույնն էր, քանի որ նրանում բավարար չափով պահպանվում էր ժողովրդային լեզվամտածողության հիմքը, և բովանդակությունը արտահայտվում էր պատշաճ մասնադրա-

⁹ Ա. Երիցյան, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Կ. Պ. Քիֆիս, 1898, էջ 132։

¹⁰ Զ. Կայդանով, Համառօտ գծագրութիւն ռուսաց պատմութեան, Մոսկվա, 1840, 3-րդ հրատարակում, էջ 7—8։

կովկասյան Ակնները է այս տարբերակի կանոնավորման, միօրինակացման և գործածության ընդլայնման գործընթացը: Արևելահայ գիտական ոճի այս տարբերակները զգալիորեն ազդվել են արևմտահայերենի համապատասխան տարբերակներից: 1845—1847 թթ. սկսած արևմտահայերենի միջին տարբերակի գրաբարացման միտումը ուժեղանում է. լավագույն է համարվում ժողովրդական-գրաբարացված տարբերակի ավելի գրաբարացված վիճակը: Գրաբարացման այսպիսի աճը կարելի է նկատել նաև «Կովկասի» նյութերում: Լեզվական այս գործընթացը տանում էր դեպի «Հյուսիսսփայլի» լեզուն:

Տեղիականության մաքրության և մշակման հարցերը կապված են գիտական ոճի նշված տարբերակների օգտագործման հետ: Մեկ ամբողջության մեջ գիտելով գիտական ոճի գրաբար և աշխարհարար տարբերակների տեղիականագործածությունը, կարելի է ասել, որ գիտական բառապաշարի մաքրման, հայացման աշխատանքը առավելագույն չափով կատարվում էր գրաբար գիտական ոճի մեջ և նվազագույն չափով՝ աշխարհարարի ժողովրդագրաբարացման տարբերակում: Ժողովրդային-գրաբարացված տարբերակում հայացման, պատշաճ արտահայտման ձգտումը ժամանակի ընթացքում մերձենում և գրեթե նույնանում է գրաբար գիտական ոճի մեջ առկա գործընթացին: Աշխարհարար գիտական ոճի գրաբարացումը կատարվում էր՝ սկզբունք ունենալով XVIII—XIX դդ. հեղինակաց, պարզ գրաբարը, որի գոյացումը գերազանցապես կապվում էր արևմտահայ մշակույթի հետ: Սկսած XVIII դ. արևելահայ լեզվական մշակույթը զարգացել է՝ մեծ չափերով յուրացնելով արևմտահայ իրականության մեջ ստեղծվածը: Արևելահայ մտավորականները Մխիթարյանների համարում էին հայկաբաններ և առհասարակ գիտական իմացության արժանապատիվ հեղինակություններ, և շնայած կրոնական անհանդուրժողությանը, կոչում էին «բազմարդյուն» (1847, 48, 196), «արժանահիշատակ հարք» (1847, 3, 24): Պուսից հետո մշակութային սերտ առնչություններ Մխիթարյանների հետ ունեին Տիսիսը: Արևելահայ մտավորականությունը ջանք էր անում հետևել արևմտահայերին և՛ մշակույթի, և՛ գաղափարական-աղգային ասպարեզներում: Արևելահայության՝ գրաբար, հիմնականում նաև աշխարհարար գրական լեզուների բառագործածության կանոնները գերազանցապես ձևավորվում էր արևմտահայ իրականության մեջ ստեղծված լեզվական համապատասխան մշակույթի վրա: 40—80-ական թրվականներին նկատվում են նաև արևմտահայերենի քերականական ազդեցություններ արևելահայերենի, հատկապես նրա ժողովրդային-գրաբարացված տարբերակի վրա: Քերականական թափանցումներ նկատելի են նաև «Կովկասի» գիտական ոճի մեջ: «Կովկասը» ազատորեն օգտագործում է արևմտահայ իրականության մեջ ստեղծված գիտական բառապաշարը. մենավաճառություն (1846, 21, 75), հասարակապետություն (1846, 23, 89), դրամագլուխ (1846, 38, 149), փողերանոց (1847, 35, 140), վառողապետ (1847, 29, 114), ծխախոտ (1846, 26, 71), անդամազնին (1847, 5, 20), շոգեկառք (1847, 4, 15), շնչորակիսիլիտրալ (1847, 6, 21), բնալույծ (1846, 7, 26), ածխածին (1847, 7, 28), ջրածին (1847, 7, 28), ջերմաչափ (1847, 7, 28), խոշորացույց (1847, 10, 39), մթնոլորտ (1847, 23, 89), օդերևույթ (1847, 30, 117), շոգենավ (1846, 15, 52), երկսայրաբանություն (1847, 29, 114), բնազնին (1846, 6, 27), կողմնացույց կամ կոմպաս (1847, 24, 95) և այլն: Ակնհայտ է «Կովկասի» լեզվի վրա Արշալույս արարատյան»¹¹ լրագրի բարենպաստ ազդեցությունը, որի լեզուն պարզությամբ, բառերի ուղղակի նորմավորում ունեցող գործածությամբ, նոր բառերի հայացի կերտման արվեստով նկատելի երևույթ էր արևմտահայերենի մշակման մեջ:

Պարզ գրաբարի բառապաշարը, որ ժողովրդային-գրաբարացված տարբերակի բառապաշարի հիմքն էր կազմում, XVIII—XIX դդ. ներկայանում էր

¹¹ «Արշալույս արարատյան», օրագիր քաղաքական, բանասիրական և առևտրական, Ձմյուռ-Նիս, 1840—1884 (հիմնադիր-խմբագիրն էր Ղ. Պալազարյանը):

որոշակի նորմավորմամբ. հատկանշական է, որ նրանում ընտիր գրաբարի (V—XII դդ.) բառապաշարին հատուկ բազմաբառությունը, բազմիմաստությունը, հոմանշությունը, համանունությունը մեծ չափերով նվազել էին: «Կովկասը», օգտագործելով այս բառապաշարը, միաժամանակ, բառաստեղծման աճող պահանջների ստիպումով, բառեր էր հայթայթում ընտիր գրաբարից (V—XII դդ.), որով պարզ գրաբարի բառային կանոնը ոչ թե խախտվում, այլ ավելի լայն ընդգրկում էր ձեռք բերում:

Մինչև «Կովկասի» հրատարակումը գրաբարի բառապաշարի գործածության որոշակի ավանդույթ էր ստեղծվել հայ իրականության մեջ: Գիտական ոճի մշակումը սկսվում էր այն բանից, որ շարադրանքը մաքրվում էր թուրքերեն, պարսկերեն, ռուսերեն և այլ լեզուների անհարկի փոխառություններից: Արդեն XVIII դ. վերջերից գրաբարի մեջ թուրք-պարսկական և այլ փոխառությունների գործածությունը որակվում էր որպես հայերենի ապականոն և աղավաղում¹²: Նման փոխառություններից զերծ, մաքուր հայերեն գրելու ջանքը սկսում է ընդհանուր դառնալ ողջ հայ մշակույթի համար XIX դ. 40—50-ական թվականներին: «Արդ ազգությունը պահելի համար և մեր ազգն յազգասիրութիւն հորդորելի համար հարկավոր պարտք ամ համարում, որ ամենեքեան ջանք առնեն հայեվար լեզվում լավ վարժվեն և լեզուշանան օտարազգի բառեր մեր հարազատ լեզվի մեջ չխողեն», — գրում է «Ազգասերը»¹³: Նույնպիսի դիրքորոշում է հանդես բերում նաև «Կովկասը». «Այժմվան լավ սովորական լեզուն համարելի է այն, որ թեև աշխարհորեն է, բայց բուն հայոց լեզվից է բաղկացյալ» (1847, 8, 31): Նույնիսկ ժողովրդաբարբառային տարբերակը, որ առատ է խոսակցական լեզվի մեջ առկա փոխառություններով, լեզվի մաքրման, հայացման նկատելի փոփոխություն է կրում: Գիտական ոճի հայացման գործընթացը բացահայտ դրսևորվում է ժողովրդային-գրաբարացված տարբերակում, որը գնալով ավելի է կանոնավորվում: Գրաբար գիտական ոճի մեջ, հատկապես նրա ատենական տարբերակում, անհարկի փոխառություններ գրեթե չկան:

Խոսակցական լեզվի թուրք-պարսկական, ռուսական փոխառությունները հայերենով փոխարինելիս փակագծերի մեջ որոշ դեպքերում տրվում էին նաև փոխառյալ ձևերը, որոնց միջոցով գրաբարյան համապատասխան բառերը ամրակայվում էին տերմինային ճշգրիտ նշանակությամբ. վարազույր/վարդալ (1846, 6, 35), ախոնդանոտ/սեղալ (1847, 22, 5), տոփական/ախտ/աթեշակ/ (1847, 5, 20), կաղամախ/լինարի/ (1847, 22, 87), մամուլ/շարխ/ (1846, 34, 195), կրպակ/դուքան/ (1846, 26, 96), մաքսատուն/տամոժնյալ/ (1847, 4, 13), իջևան/ստանցիալ/ (1846, 6, 35), գնդասեղ/բուլավկալ/ (1846, 61, 21), մայթ/տրոտուար/ (1847, 32, 28), զանկապան/լուլքի/ (1846, 6, 21), գավառ/գուրեռնիալ/ (1847, 3, 17) և այլն:

Ռուսերեն հասարակական-քաղաքական և ռազմական տերմինաբանությունը, որ մեծապես նպաստել է արևելահայ համապատասխան տերմինաբանության զարգացմանը, սկսում է ազդեցություն գործել սկսած XVIII դ., և «Կովկասի» համաբնույթ տերմինաբանությունը կազմում է այդ ազդեցության առավել ակնառու արտահայտությունը: «Կովկասը» հմտորեն օգտագործում է առկա տերմինացումները, կատարում նոր հաջող տերմինացումներ. կուսակալ/լորդ գուրեռնաթոռ/ (1847, 41, 164)¹⁴, խորհուրդ/կոնգրես/ (1847, 4, 14), դիմակալ/ք. оппозиция/ (1847, 8, 32), գնդապետ/полковник/ (1847, 41, 67), մուրհակագիր/акция/ (1847, 15, 59), կաճառ/баталион/ (1847, 11, 41), գունդ/дивизия/ (1847, 16, 129), թև/фланг/ (1847, 12, 45), բերդապահ դարնիզոնի/դորք/ (1847, 2, 45), վերահասություն/ревизия/ (1847, 8, 28), վկայական ատեստատ/ (1847, 39, 158), պատնեշ/դեֆիլե/ (ն. տ.) վերատեսուչ/директор/ (1847, 16, 63), դրոշմավոր

12 Չ. Շահմիրյան, Գիրք անուանեալ որոգայթ փառաց, Մադրաս, 1773, էջ 85—87:

13 «Ազգասեր», Կալկաթա, 1845, № 8, էջ 31:

14 Օրինակները բերում ենք հարազատ մնալով լրագրի սկզբունքներին:

լղերբովի (1847, 11, 41), լձողիք/սաժեն/ (1847, 10, 32), քուէայթ/ձայնք/ (1847, 28, 110), նվագերգություն /концерт/ (1847, 15, 60), հատված /дв-визия/ (1847, 8, 17) և այլն: Փակագծում օտար անվանման նշելը ցույց է տալիս, որ դրանց համապատասխան հայերենները, լինելով նոր տերմինացումներ, դեռևս չեն կայունացել: Սրանց համեմատ մեծ քանակ են կազմում արդեն կայուն տերմինավորում ունեցող բառերը, որոնց կողքին այլևս չեն տրվում օտար ձևերը. պաշտոնատար (1846, 15, 52), պայմանագրություն (1847, 12, 46), նախարարություն (1847, 8, 29), խոռվարար (1847, 30, 118), անկախություն (1847, 30, 120), ազնվականություն (1846, 22, 177), սնանկություն (1847, 40, 163), դեսպանություն (1846, 15), վերատեսչություն (1846, 21, 75), զորագլուխ (1847, 30, 122), ութագործիք (1846, 5, 19), գծություն (1847, 8, 35), արյունահեղություն (1846, 4, 19), աստիճանավոր (1846, 21, 75), խորհրդարան (1846, 15, 52), հակ (1847, 4, 19), ատրճանակ (1846, 21, 76), հրազենք (1847, 18, 69), վկայագիր (1846, 21, 107) և այլն: Տերմինավորման միջոցով բառերի բազմիմաստությունը վերացել է: Օտար բառերին համապատասխան հայերեն ձևերի ընտրությունը կատարվում էր եղած լեզվական ավանդույթի հաշվառմամբ, որի հետևանքով դրանք՝ գրեթե չեն զիջում արևմտահայ տերմինաբանական մակարդակին: «Կովկասի» օգտագործած բառապաշարը ընդարձակ է, սակայն պարզ՝ առանց խրթնաբանության: «Կովկասի» բառապաշարը քննադատողներից մեկին այսպես է պատասխանել խմբագիրը. «Եվ վրիպիս յասելդ՝ թէ բառք քաղեալք ի բառարանէ՝ դնին յումպետս. չիք ինչ այդպիսիք Կովկաս լրագրի» (1847, 34, 139):

Ժողովրդային-գրաբարացված տարբերակի նորմավորմամբ արտամղվում էին ժողովրդախոսակցական գիտական անվանումները. լուսնոտություն (քնում շրջող) (1847, 51, 20), վերնոտություն/կարիքավոր (1847, 5, 25), տենդ լողոցոց (1846, 15, 54), ձխախոտ/թամբաքով (1847, 8, 38), գինեբեր որթ/վազ/ (1847, 22, 87), փիղ/ֆիլ/ (1846, 23, 86), վաշխ/շահ/ (1847, 22, 87) և այլն: Ժողովրդախոսակցական տարբերի փոխարինումը պարզ գրաբարի բառերով ժողովրդային-գրաբարացված տարբերակի բառապաշարի նորմավորման ընդհանուր կանոնն էր (թեև ոչ միշտ արդարացի):

«Կովկասը» եղած բառապաշարը կարելի չափով տերմինացնելուց հետո ըստ անհրաժեշտության դիմել է նաև նորաբանությունների ու փոխառությունների: Նոր բառերի մեծ մասը վերաբերում է քաղաքական, ռազմական ոլորտին. մաքսատվություն (1846, 21, 75), քվեարկություն (ն. տ.), վերազնություն (1846, 21, 77), վկայաթուղթ (1846, 21, 77), դաշնաթուղթ (1847, 48, 190), թղթադրամ (1847, 2, 7), կայսրաբա/царь, император/ (1847, 4, 13), քաղաք-նավահանգիստ (1847, 5, 17), աճրդատում/լուտարէյնի բիլեթ բնիթ/ (1847, 6, 21), գրամատուն (1847, 7, 24), դերծովակալ (1847, 17, 72), ծովակալություն/адмиралтейство/ (1847, 8, 31), հրազինապետություն (1847, 31, 122), հրաձգություն (1847, 20, 77), տպագրատուն (1857, 29, 159), դրամատվություն (1847, 37, 148), քաղաքակրթություն (1847, 22, 85) և այլն: Նորաբանությունները ըստ էության հայերենին հարազատ, վայելուչ կազմություններ են, գրեթե չկան օտար ճաշակով կազմված կամ անհարկի ձևեր: Ավելի մեծ քանակ են կազմում բառակապակցությամբ արտահայտված նորաստեղծ տերմինները, որոնք ուղղակի պատճենումներ են ռուսերեն ձևերից, ընդ որում, բառակապակցությամբ արտահայտելը հաճախ անզգալի է դարձրել պատճենման արհեստականությունը. պատվավոր լեզեոն (1847, 21, 76), շքավոր բղեշխ (1847, 5, 79), գահերեց քաղաքացի/почетный гражданин/ (1847, 25, 97), դաշնակից տերություն (1847, 30, 120), բարձրաստիճան անձինք (1847, 29, 114), ժամանակավոր կառավարություն (1847, 5, 17), խաչ ասպետական նշանի (1847, 8, 31), առաջապահ զորք (1847, 12, 47), բլիսավոր շտաբ (1847, 31, 121), անձնապահ զորք/զվարդիա/ (1847, 37, 146), պատերազմական հարկապահանջություն (1847, 14, 60), լայնաբերան

թնդանոթ (1847, 30, 117), նախարարություն արտաքին իրողություն (1847, 11, 40) և այլն: Բառակապակցությամբ արտահայտված անվանումները մշակվածությամբ գրեթե հավասար են ռուսական ձևերին: «Կովկասի» ստեղծած այսպիսի նորարանությունների ղգալի մասը հետագայում ընդհանրացավ արևելահայ լեզվում:

Հասարակական-քաղաքական տերմինաբանության զարգացումը հիմք և ազդակ էր այլ բնագավառների տերմինաբանության զարգացման համար: Այդ տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում «Կովկասի» բնագիտական, բժշկական նորաստեղծ տերմինաբանությունը: Բերենք մի քանի օրինակ. դիտանոց աստեղաբաշխական/обсерватория/ (1847, 15, 57), մագնիսական զորություն (1847, 24, 95), հրերևույթ մետեորա (1847, 30, 117), աստղ բեռական (1847, 24, 952), առածգական զորություն (1847, 5, 19), սպիտակ նավթ (1847, 7, 27), արջասպային ջուր (1847, 10, 44), ծծմբային ցնդական ոգի/серный эфир/ (1847, 13, 51), հանքային ածուխ (1847, 30, 118), ծովակատու (1847, 6, 21), արքայավագր (1847, 23, 84), գոմեշ ծովային (1847, 34, 135), գնդակ արյան (1847, 10, 39), ցրտարյուն կենդանի (1847, 10, 39), ջերմարյուն կենդանի (ն. տ.), կաթնասուն անասունը/млекопитающие/ (ն. տ.), շիճուկ արյան (ն. տ.), բնական ջերմություն (ն. տ.), հրատափնապ տենդ (1847, 7, 27), ջրերկշոտություն/водобоязнь/ (1847, 10, 37), միզագրավ բարինք (1847, 13, 51), միզաքարինք (ն. տ.), միզանք (ն. տ.), դեղնաներկ (1846, 21, 76), մաղձացավ/խոլերա/ 1847, 26 103), փոխանցական ցավ (1847, 10, 37), դեղանոց/պատեկա/ (1847, 10, 37) և այլն: Նկատելի է, որ բնագիտական-բժշկական բառապաշարը սակավաթիվ է, սակայն եղածն էլ հիմք է տալիս ասելու, որ այն հայացման, տերմինամշակման առումով ներկայացնում է բարձր մակարդակ: Բանն այն է, որ հոգվածները, որոնցում հանդիպում են այս բառերը, գրել էին հայերենին լավատեղյակ մասնագետները:

Ժողովրդային-բարբառային տարբերակը գիտակցաբար պահպանում էր հավելորդային փոխառությունները ժողովրդին ավելի հասկանալի լինելու նպատակով, իսկ ինչ վերաբերում է ժողովրդային-գրաբարացված տարբերակին և գրաբար գիտական ոճին, ապա նրանցում օտար բառերը մտադրված հայացվում էին, և նույնիսկ կարելի է մաքրամոլության օրինակներ գտնել. մակասխաղ/բիլլիարդ/ (1847, 24, 15), կերպասյա բաճկոն/կամզոլ/ (1846, 28, 78), վեմ պատվական կճովգրանիտ/ (1847, 24, 415), երկոսկյա/ֆունտ ստերլինգ/ (1847, 41, 163) և այլն:

Գիտական լեզվի կազմավորման տվյալ շրջանում բնական էր հայերեն և փոխառյալ կրկնակ ձևերի առկայությունը. մաղձամահ (1847, 27, 105)—մաղձացավ/խոլերա/ (1847, 26, 103)—խոլերա (1846, 13, 53), բատալիոն (1847, 7, 26)—կաճառ/батальон/ (1847, 11, 44), գլխապետ/капитан/ (1846, 26, 84)—կապիտան (ն. տ.), ստորին գնդապետ (1847, 17, 67)—պոտպոկովնիկ (1846, 22, 89), ոլորտ (1847, 12, 45)—օկրուգ (1847, 4, 14), քաղաքակալություն/полиция/ (1847, 7, 25)—պոլիցիա (ն. տ.) և այլն: Համապատասխան հայերեն տերմինները չիմանալու հետևանքով սպրդել են մի քանի փոխառություններ. Ժիրաֆ (1846, 23, 84), հիպպոպոտամ (1846, 23, 84), օֆիցեր (1846, 23, 84) և այլն:

«Կովկասում» եղած փոխառությունների մեծ մասը հետագայում հաստատվեց արևելահայ գիտական լեզվում. այդ նշանակում է, որ գիտական նոր բառերի ստեղծումը և փոխառումը «Կովկասում» չափավոր և հատորեն էր կատարված: Բերենք «Կովկասի» կատարած փոխառություններից մի քանի օրինակ. դեներալ լեյտենանտ (1846, 26, 78), զեներալ մայոր (1846, 26, 77), մարշալ (1847, 5, 20), ֆելդմարշալ (1847, 5, 19), դեպուտատ (1847, 8, 32), դեպարտամենտ (1847, 8, 29), մաոինատ (1847, 42, 169), կոնստիտուցիա (1847, 42, 125), դոժ (1847, 44, 164), շտատ (1847, 21, 77), դուքս (1847, 41, 164), տրանսլիտ (1847, 25, 518), տելեգրաֆ (1847, 5, 19), չուգուն (1847, 6, 21), կազ (1847, 7, 27), ֆաբրիկա (1847, 8, 29), ֆայանս (1847,

621), կամֆորա (1847, 10, 40), էտիկետ (1847, 9, 35), կանտոր (1847, 18, 75), մանուֆակտուրա (1847, 19, 75), դոկումենտ/վկայական/ (1847, 8, 31), ռոմ (1847, 8, 21), շախլի (1847, 6, 21), գալուն/ժապո/ (1847, 6, 21), գուդեն (1847, 47, 169), կարտոֆել (1847, 6, 24) և այլն: Փոխառությունները տրվում են արևելահայ տառադարձությամբ, սակայն նկատվում է որոշ տարբերություններ: Կան գույգեր և՛ արևելահայ, և՛ արևմտահայ տառադարձությամբ: Կարլամենթ (1847, 2, 7)—պառլամենտ (1847, 10, 27), թարիֆ (1847, 6, 26)—տարիֆ (1847, 5, 19), շտաբ (1847, 31, 120)—շտապ (1847, 8, 31), կապիսենթ (1847, 12, 37)—կարիսենտ (1847, 12, 39), ֆունթ (1847, 6, 21)—ֆունտ (1846, 23, 85) և այլն: Այսպիսի թափանցումները պատահական չեն. անգամ Գ. Երեցփոխյանի գրաբար բառարանում¹⁵ կան արևմտահայ տառադարձությամբ հարյուրից ավելի փոխառություններ, որոնք ուղղակի վերցված են արևմտահայ լեզվական մշակույթից:

«Կովկասում» պատահում են նաև գիտական լատիներենի անվանակարգության հայատառ փոխադրումներ. լիքուրիցիա/մատուտակ/ (1846, 7, 23), միլեֆուլում լեոնթոզոն (ն. տ.), թարաբ սաքում (ն. տ.), գլիցերիցա գշաբարա (ն. տ.), հերբա ֆամանտիաս (ն. տ.) և այլն: Արևելահայ լեզվական մշակույթը, նոր-նոր հանդիպելով լատինատառ այսպիսի անվանակարգերի, տակավին չկողմնորոշվելով, նմանողությամբ դրանք փոխադրում էր հայերենի մեջ: Հետագայում Ստ. Նազարյանը ևս դժվարություններ հարուցող այսպիսի դեպքերում դիմում է այդ նույն միջոցին՝ օգտագործելով նաև լատինատառ գրությունը: Արևմտահայ մշակույթը, 40-ական թվականներից սկսած, տրամագծորեն հակառակ ուղի էր բռնել, թեև տակավին մեծ գործունեություն էր ծավալել:

XIX դ. 40—60-ական թվականներին արևելահայ տերմինաբանությունն առջև ծառացած խնդիրների, նրա կազմավորման առանձնահատուկ պայմանների մասին ամբողջական պատկերացում է տալիս «Ընթերցասիրացդ Կովկաս լրագրոյս. ծանոթութիւն» հոդվածը (1847, 26, 103—104): «Կովկասը» դարձել էր արևելահայ հասարակական-մշակութային կյանքի արտահայտիչը և նրա առաջընթացի կարևոր ազդակներից մեկը. ընթերցողները ցանկանում էին ավելի մշակված տեսնել. նրա գիտական բառապաշարը, և խմբագիրը, ի պատասխան, ներկայացնում է ժամանակի արևելահայ տերմինաբանության կազմավորման դժվարություններն ու խնդիրները. «Ի բազմաց հետէ լսելի լինին քանքարտանք ոմանց ուսումնասիրաց, որք տեսնալ ի լրագիրս յայսմիկ զբառս այլազգականս, խանգարիչս ջինջ և պարզ անարատութեան լեզուիս Հայոց, թախանձին քաղել քանցել զայսպիսի մոլախոտս ի պարտիզաց գրականութեան, և մաքրել յստակել զդպրութեան ասպարեզ: Այլ իմ պատասխանի եղեալ է միշտ այսպես տարածեցեք զձեր խնդիր առ այն, որ գլուխ է ազգի և իշխան գրականութեան և միայն կարող կանոնադիր լինել լեզուի: Զնոյն և այժմ առ ձեզ կրկնեմ ընթերցասերք մեր, և մանաւանդ հեղինակը լրագրոց Ազգասիրի, Արշալոյսոյ, Հայաստանի և այլոց, որոց ծիգն է դնել զճրագ լուսոյ յաշտանակ ոսկի, մի զանց առնիցեք յօգուտ գրականութեան մերոյ շարժել խնդրովք և աղերսիւք զայս այլ իմաստուն, զի նա յանձին կալեալ զաշխատութիւն գովութեան արժանաւոր, և յայսմ մասին լիցի առաջնորդ ամենայն գրասիրաց» (ն. տ., 103):

Ցույց տրվեց, որ «Կովկասի» գիտական բառապաշարի մեջ ըստ էության անհարկի փոխառություններ չկան (նկատի ունենալով մասնավորապես 40-ական թվականներին արևելահայ լեզվական մշակույթը), այլ կան հայացման դժվարություններով պայմանավորված փոխառություններ, որոնք հավելուրդային կարող էին ընկալվել միայն լեզվի վարզացման հետագա ընթացքում: Տվյալ ժամանակամիջոցում առավել մաքուր գիտական ոճի պահանջը առաջ էր գալիս այն բանից, որ արևմտահայ գիտական ոճը ավելի հայացի ու մշակված արտահայտություն ուներ: Դեռևս XVII դ. սկսած արևմտահայ գի-

¹⁵ Գ. Երեցփոխյան, Բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ, Տփլիս, 1854:

տական բառապաշարը մեծապես հարստացել ու մշակվել էր՝ յուրացնելով լատիներենի, իտալերենի, ֆրանսերենի, գերմաներենի, հունարենի, պարսկերենի և այլ լեզուների մշակույթը: Գիտական ոճի մշակումը արևմտահայ իրականության մեջ իրագործում կամ կառավարում էին Մխիթարյանները: Իսկ արևելահայ գիտական ոճի մշակման հույսը կապվում էր ներսես Աշտարակեցու հետ: Արևելահայ և ռուսահայ իրականության մեջ XVII դ. մինչև XIX դ. 30-ական թվականները գիտական բառապաշարը պատմական վատթար պայմանների պատճառով մեծ քայլեր չէր կատարել. օտար զարգացած լեզուների հետ շփումը թույլ էր ու անկանոն, և միայն 1800-ական թվականներին արևելահայերի լուսավորության հիմնական աղբյուրը դառնում է ռուս մշակույթը: Հարկ է նշել, որ ռուսերենի գիտական ոճը նույնպես ձևավորման ընթացքի մեջ էր. վիթխարի չափերով յուրացնելով օտար լեզուների գիտական ոճի արվեստը՝ այն նույնիսկ XIX դ. 50—60-ական թվականներին, կայունացած, նորմավորված չէր: Այնուամենայնիվ, ազգային միասնական մշակույթի զարգացման ընթացքը պահանջում էր, որ արևելահայ գիտական ոճը հետ շմնար արևմտահայ գիտական ոճի մակարդակից:

Հասկանալի է՝ շատ մեծ նշանակություն ունի լեզուների տեղական ու խորը շփումը. նոր զարգացող լեզվի գիտական ոճը կանոնավոր և ճշգրիտ տերմինաբանություն է մշակում ու գիտական արտահայտման նրբություն է ձեռք բերում՝ զարգացած լեզվի ազդեցության տակ՝ միայն երկարատև լեզվական փոխազդեցության պայմաններում և բնական էր, որ ռուսերենի գիտական բառերին համապատասխան հայերեն բառերի տերմինավորումը ժամանակի գիտական ոճի թերևս ամենադժվար խնդիրներից էր. «Որչափ աշխարհ են, յորս պանդխտեալ են ազգ մեր, այնքան զանազան են անուանք, կարգ և եղանակը պաշտմանց, և այլ գիտելեաց... Армия թարգմանեմ բանակ. դի արդ թարգմանեցուք զայլ գունդս, бригада, полк, рота, колонна, ոյք ի բառիցս յայսցանէ են պատասխանիք անուանցս. գունդ, կանառ, վառռ, ջոկ և այլն: Կամ ի գրելն ուրուք վառռ, կարէ ընթերցողն իմանալ թէ թարգմանել рота, կամ колонна և ոչ бригад կամ дивизия նույնպես և զայլ մանրորդս հետեակաց և հեծեալ զօրաց, և հրադինապետութեան. և ժողային իշխանութեան և մաքսատան կառավարութեան. և անտառաց, և լերանց և հանքաց. և այլ մասանց արքունական զօրութեանց, ընդ որս զանունս ամենամեծ և սինլքոր պաշտոնակալաց թէ՛ հրամանատարաց, և թէ՛ սպասաւորաց, թէ ում յայսցանէ արժանիցէ ընծայել զանունս հազարապետ, բրգեշխ, դուբս, արքայադղի, և իւրաքանչիւր ումեք զոր ի պատուանուն ածականաց» (ն. տ., 104): Սակայն սա կապված էր ռուսական իրականության հետ. տարբեր լեզուների անվանակարգությունը իր հերթին դժվարություններ էր հարուցում: Վերջին հաշվով, միայն լեզվական իմացությունը բավարար չէր. հարկավոր էր հասկացությունների հստակ իմացություն. «Անուանք իւրաքանչիւր թագաւորութիւնս վարին ըստ նոցայն բարբառոյն. և կարի դժուարին է համաձայնել զամենայն ի մի լրութիւն հայկազեան լեզուի: Մի միայն օրինակ Ռուսաց անուանագրութեան չի բաւական լինել կանոն համաշխարհական կարգաց. այս գործ կարօտի մեծի երկասիրութեան. ոչ բառարանք կարեն ձեռնտու լինել այսմ, այլ քաջ տեղեկութիւն կարգաց իւրաքանչիւր տերութեանց» (ն. տ.): Հայերեն բառերը ռուսերեն բառերի հետ տերմինային համապատասխանության մեջ դնելու դժվարությունը պատահում էր ամեն բնագավառում. «...ևնգաբարձուն ոչ կարէ արտահայտել զայն ընդարձակ իշխանութիւն, զոր յանձին իւրում պարունակէ попечитель» (ն. տ.):

Հին բառերը ռուսերենին համապատասխան տերմինացնելը լուրջ ու հրատապ խնդիր էր, մի անհատի կարողություններից վեր: Խմբագիրը գիտական բառապաշարի մշակումը առաջարկում է դարձնել հասարակական քննության առարկա: Նույն հոդվածում քննության նյութ է առաջարկում իր ընթերցողներին և խնդրում կարծիքներ հայտնել: Ժամանակաշրջանի արևելահայ գիտական բառապաշարի կազմավորումը վառ պատկերացնելու համար բերում ենք հոդվածից մի ընդարձակ փաղվածք. «Լուծանել զնշանակութիւն բառիցս Հայոց.

դպիր, դպրութիւն, դպրոց, դպրատուն, դպրապետ, լսարան, համալսարան, կրթարան, մարգարան, վարժատուն, վարժապետ, ուսուցիչ, վարդապետ, մանկավարժ, դաստիարակ, ձեռնասուն և բացայայտել՝ թարգմանի՞ն սորա բառիւքս учитель, училище, профессор, академия, университет, гимназия, семинария, лицей, воспитанник, преподаватель, гувернёр և այլն, կամ յայլադղականէ զհայերէն մեկնել, կամ ի Հայերենէ յայլադղական բացատրել: Նոյնպէս զբառս պալատ, պէր, մեր սահմանել կանոնօք. զի յայսմ հետէ ընդ ամենայն տեղիս միօրինակ առեալ դմի և նոյն նշանակութիւն զգեսցեն. Սա ի վաղուց հետէ հայացուցեալ եմ զմի բառ այլազգի, որ է դեպուտատ, որ բազում ուրեք վարի որպէս երեսփոխան կամ փոխանորդ և այլն, և հաճեալ եմ ընդ այս, գի ունի զհնչիւն հայերէն բարդութեան ի բառիցս ղէպ և դատ, և բազում ուրեք յարմարի իսկ բուն նշանակութեան: Արեւունիք կոչեմ զայն զոր ռուսերէն двор ասեն, որ է տուն, կամ գաւիթ. երբեմն իմանալով զապարանսն և երբեմն զգերդաստանն կամ զբնակիչս տան թագաւորի: Գո՞յ արդեօք այնպիսի բառ, որ կարիցէ բացատրել զնշանակութիւն անուանս дворянин, զոր այժմ բառիւս, ազնիւ լեզումք ի մեր լեզու: Հանդերձապետ, սենեկապետ, թիկնապահ, զինակիր, խորհրդարան, դպիր, զինչ պաշտոն նշանակեն ճշտութեամբ: Բացատրել զնշանակութիւն անուանց драгун, гусар, инженер, землемер, архитектор և իւրաքանչիւրոց տալ զիրոպսան հայերէն կոչումն ըստ այնմ նշանակութեան, որով վարի այժմ իւրաքանչիւր բառ: Գիտեմ землемер կարէ թարգմանիլ երկրաչափ, երկրաչափութիւն՝ геометрия. երկրաչափ է նա, որ ուսեալ է զայն, այլ землемер է մասնաւոր պաշտոն: Այսպէս և այլ ամենայն բառք, որոց ոչ միայն անուանք խնդրին այլ և բաւական մեկնութիւն (ն. տ., 104):

Այսպիսով, էարեւի է ասել, որ «Կովկասը» զարգացրել է արևելահայ իրականութեան գիտական ոճերը՝ օրինակելով և յուրացնելով ռուսերենի դիտական ոճերի արտահայտչական հնարավորութիւնները: Հաղթահարելով նախորդ շրջանի տեքստային տարբայնութիւնը, նա հայերենի գիտական բառապաշարը հարստացրել է բազմաթիւ նորաբանութիւններով, նոր տեքստային տարբայնութիւններով ու անհրաժեշտ փոխառութիւններով:

«Կովկասը» արևելահայ իրականութեան մեջ առաջինն էր, որ տեքստային տարբայնութեան արժարժեք՝ նպաստելով հետագայում տեքստային տարբայնութեան տեսակետների ձևավորմանը և ուղղվածությանը: Լինելով ռուսերենի հետ հայերենի շփման առավել նշանակալի երևույթը՝ այն ճանապարհ հարթեց ռուս գիտական ոճին համընթաց արևելահայերենի գիտական ոճի զարգացման համար:

РОЛЬ ПЕРИОДИЧЕСКОГО ИЗДАНИЯ «КОВКАС» В ИСТОРИИ ВОСТОЧНОАРМЯНСКОГО НАУЧНОГО СТИЛЯ

Е. М. ТАТЕВОСЯН

Резюме

На ранней стадии формирования восточноармянской терминологии значительную роль сыграло периодическое издание «Ковкас» (Тифлис, 1846—1847). Усвоив выразительные средства научного стиля русского языка того времени, газета «Ковкас» разработала разновидности научного стиля, существующие в армянском языке, обогатив армянский научный словарный фонд многочисленными терминованными словами, неологизмами и заимствованиями. Еженедельник «Ковкас» содействовал формированию теоретических основ армянской терминологии.